ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ հետևյալ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար

ՀՀ Կոտայքի մարզի Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ (ծածկագիր 3.1-3)

- իրականացնում է տնային այցելություններ, ուսումնասիրում է սոցիալական աջակցության կարիք ունեցող անհատի, ընտանիքի սոցիալական և նյութական պայմանները

- պաշտոնի անձնագրով սահմանված այլ գործառույթներ

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

ա) առնվազն միջնակարգ կրթություն

բ)ունի «Համայնքային ծառայության մասին», <<Հանրային ծառայության մասին>>, «Տեղական ինքնակառավարման մասին», «Սոցիալական աջակցության մասին», <<Երեխաների իրավունքների մասին>> և «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների, աշխատակազմի կանոնադրության և այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

գ)տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվությանը.

դ)ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Մրցույթը կկայանա 3 հուլիսի 2018թ. ժամը 11-00 Քանաքեռավանի համայնքապետարանի շենքում (գ.Քանաքեռավան, 13-րդ փողոց, 4-րդ նրբ. Շ. 2):

Դիմող ՀՀ քաղաքացիները և փախստականի կարգավիճակ ունեցող անձինք պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը

դիմում մրցույթային հանձնաժողովի անունով (լրացվում է փաստաթղթեր ներկայացնելիս)

- տվյալ պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջներ բավարարումը հավաստող փաստաթղթերի, դիպլոմների, վկայականների, աշխատանքային գրքույկի (վերջինիս բացակայության դեպքում անհրաժեշտ է ներկայացնել տեղեկանք համապատասխան մարմնից) պատճենները բնօրինակների հետ միասին:
- արական սեռի անձինք նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը բնօրինակի հետ միասին
- մեկ լուսանկար 3x4 սմ չափի
- անձնագրի պատճենը

Փաստաթղթերը ընդունվում են Քանաքեռավանի համայնքապետարանի աշխատակազմում, հեռ. 099703071 կամ ք. Հրազդան, Կենտրոն վարչական շենք, Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻՄ և ՀԾՀ բաժնում, հեռ. 0223 23413, ժամը 10-00-ից մինչև 15-00-ը, բացի շաբաթ և կիրակի օրերից:

Փաստաթղթերի ներկայացման վերջին ժամկետն է 18.06.2018թ: